

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 2

10.01.2022թ. կնքված N ՀՀՔԿ-ՄԱԽԾՁԲ-21/1 գնման պայմանագրի

ք. Երևան

14.11.2022թ.

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Ա. Մկրտչյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Հայնախագիծ» ԲԲԸ-ն (այսուհետ՝ Կատարող), ի դեմս տնօրեն Գ. Ազիզյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, (երկուսը միասին՝ այսուհետ՝ Կողմեր) հիմք ընդունելով ՀՀ կառավարության 03.11.2022 թ. N 1705-Ն որոշումը և Փոքրաքանակ երեխաներով համարված «Մոդուլային» տիպի հանրակրթական դպրոցների տիպարային նաժազմանախահաշվային փաստաթղթերը ՀՀ Սյունիքի մարզի Կապան խոշորացված համայնքի Դավիթ Բեկ, Եղվարդ և Վերին Խոտանան բնակավայրերում տեղակայման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման խորհրդատվական ծառայությունների մատուցման համար Կողմերի միջև 10.01.2022թ. կնքված N ՀՀՔԿ-ՄԱԽԾՁԲ-21/1 գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 և 7.8 կետերը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը որոշեցին՝ Պայմանագրում 2022 թվականին նախատեսված ֆինանսական միջոցների շրջանակներում ծառայությունների մատուցման վճարման ժամանակացույցը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն Համաձայնագրի հավելվածի:

2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը բաղկացած է 1 (մեկ) էջից, իսկ համաձայնագրի հավելվածը կազմված է 2 (երկու) էջից, կնքվում են երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Համաձայնագրի հավելվածը համարվում է Համաձայնագրի անբաժանելի մասը: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ՝

ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011040319, 900011040327,
900011040301

Գլխավոր քարտուղար

Ա. Մկրտչյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Կ Ա Տ Ա Ր ՈՂ՝

«Հայնախագիծ» ԲԲԸ
ք. Երևան, Չարենցի 1
«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2470100038500000
Հ/ՀՀՀ 001503291

Տնօրեն՝



(ստորագրություն)
Հ.Տ.

